

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՆՈՒՄ, Ազատի փողոց

ՄՈՒԳԱԹԱՍ/ի ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS

Le Caire, rue Abdine

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐ

Մէկ անգամի համար տուր 3 Ղրշ. ողջ.

Մէկ անգամե անկի ծանուցումներու համար

մասնաւոր պայմաններ:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՄԱՐ

Տարեկան Ղրշ. ողջ 100

Վեցամսեայ » 55

Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԵՎԱՆԻ ԶԱՄԱՐ

Տարեկան Ձր. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

(ՈՒՆԻ Ե՝ ԳՐՈՒԹԻՒՆ)



ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԴՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԻ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՆՓԻԱՐ

Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐԵՅԵԱՆ

ԸՆՏՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿԻՆԻԿԻՆՑ

1901 Նոյեմբեր 29

32 ԲՈՒՆ ԵՍՏՈՒՄ

Այս առաւօտ, Ատանայէ քաշուած հեռագիրներ կ'աւետեն Կիլիկիոյ Կաթողիկոսական յաջող ընտրութիւնը, յանձին Տ. Գէորգ Սրբազան Երեյեանի, որուն Կաթողիկոսական ընտրեւ լիութենէ հրաժարման մասին զրոյցներ կը չըլէին այս օրերս: Հակառակ ամէն կողմէ եղած գուշակութեանց, որով հաւանական ընտրելին կը նշկատուէր Տ. Սահակ եպիսկոպոս Խապանի, այսօր Կիլիկիոյ աթոռին Կաթողիկոս կ'ընտրուի Երուսաղէմի Պատրիարքական փոխանորդ Տ. Գէորգ Սրբազան Երեյեան, որ կարող, պարտաճանաչ, սիրուած ու յարգելի եկեղեցական մըն է:

Կաթողիկոսական ընտրութիւնը կատարուել է հետեւեալ պարագաներուն մէջ. — Ընտրողական Ժողովի նախագահ Տ. Սահակ եպիսկոպոս Խապանի, Պոլսէն ստացուած հեռագիրներուն համաձայն, երէկ հրաւերուողներ է Ընտրողական Ժողովի բոլոր անդամներուն, ներկայ գտնուելու համար Ընտրողական Ժողովին նիստին: Որոշեալ ժամուն, երէկ, եկեղեցական ու աշխարհական անդամները հաւաքուել են Ատանայի Մայրեկեղեցիին մէջ, որ այս առթիւ չըքեղապէս զարդարուած: Հանդիսաւոր ու պաականելի երեւոյթ մը առած էր: Նախ հեռագրին պարունակութիւնը հաղորդուել է Ժողովին, ապա հանդուցեալ Մկրտիչ Կաթողիկոսին համար հանգստեան մաղմանք մը կատարուելէ յետոյ, ձեռնադրուած է քուէարկութեան: Ներկայ ընտրողներուն 32 քուէովը

Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐԵՅԵԱՆ Կիլիկիոյ Կաթողիկոս հռչակուած է: Ընտրութեան միջոցին, եկեղեցիին ներսն ու դուրսը ահագին բազմութիւն մը լցուած էր, որ մեծ խանդավառութիւն ու ոգևորութիւն ցոյց կուտար: Երախտագիտութիւն յայտնուած է Վէհ: Սուլթանին համար, ընտրութեան յաջող ելքին առթիւ, Ըն-

տրութեան արդիւնքը հաղորդուած է կայս. կառավարութեան, Ալլ. Պատրիարքարան և Երուսաղէմ:

Արեւելք

Նոյ. 30/13 Գեկ. 1901

* * *

Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս Ամեն Տ. Գէորգ Սրբազան, Ռումանիոյ Խամախիա քաղաքը ծնած է 1852 փետր. ամսուն: Որդին եղած է նոյն քաղքին մէջ պաշտօնավարող Տ. Յարութիւն Բորովիչ քահանային, որուն թարգմանութիւնն է Երեյեանի: Բորովիչները նշանակելի տեղ մը կը զբաւեն Ռումանայի զաղթականութեան մէջ: Գէորգ Սրբազան նախնական կրթութիւն մը ստանալէ յետոյ՝ ծնողքին կողմէ Երուսաղէմ զբրկուեցաւ, ուր Ժառանգաւորաց վարժարանին աշակերտելով մեծ յառաջդիմութիւն ցոյց տուաւ: Դպրոցին չըլանը աւարտելէ յետոյ, սարկաւաղ և 1878ին ալ հազիւ 26 տարեկան վարդապետ ձեռնադրուեցաւ Երուսաղէմի Տ. Եսայի Պատրիարքէն: Վաճառքին մէջ իբրեւ քարտուղար և Ժառանգաւորաց վարժարանին մէջ իբրեւ ընտանոցիչ պաշտօնավարեց: 1885ին Պոլսի գնաց և քանի մը տարի հոս մնալէ յետոյ Երուսաղէմ դարձաւ: 1888ին իբրեւ հրատիրակ մայրաքաղաքաւ եկաւ, Տ. Յարութիւն Պատրիարքը Երուսաղէմ առաջնորդելու համար, 1890ին ծայրագոյն վարդապետութեան աստիճանին բարձրացաւ: Երուսաղէմի վաճառքին կողմէ երբ նշկարակ զրկուեցաւ Երուսաղէմ և Ռումանիա, ուր իր լեզուագիտութեան շնորհիւ, գնահատուի ծառայութիւն: Ներմատոյց առաջնորդութեանց կազմակերպութեան համար, Երուսաղէմի պատրիարքութեան Պոլսոյ փոխանորդը Սէֆէրեան արքեպիսկոպոս Ֆիլիքապէս տկարացած ըլլալով, Գէորգ վարդապետ Երեյեան օգնական կարգուեցաւ: 1893ին երբ Գէորգ Սրբազան վախճանեցաւ, Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութիւնը փոխաւորողութեան պաշտօնին կոչեց զինքը: 1898ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Տ. Գէորգ Սրբազան կատարեալ խղճմտութեամբ ու ձեռնհասութեամբ վարեց այդ պաշտօնը մինչև իր ըն-

տրութեան թուականը: Տ. Գէորգ եպիսկոպոս նաեւ իբրեւ պատուիրակ Երուսաղէմի և Ռումանիոյ Հայերուն, ներկայ գտնուեցաւ 1892ին Մայր Աթոռի մէջ կատարուած կաթողիկոսական ընտրութեան: Երեյեան Սրբազան մասնակցած է նաեւ Պատրիարքարանի վարչական Ժողովներուն: 1894ին ստուար քուէով անդամ ընտրուեցաւ Կրօնական Ժողովին և երկու տարի պաշտօն վարեց: Ապա վեց ամսոյ չափ անդամակցեցաւ Խառն Ժողովին: Նաեւ անդամակցած է զանազան յանձնաժողովներու և Իզմիրեանց Գրական յանձնաժողովին:

ԿԻՆԵՐԸ ԱՌԱՅ ԹԱՇԿԻՆԱԿԻ

Բարիցի «Ժամանակ տէ Տէպա» թերթը յօդուած մը հրատարակած է որուն մէջ կը յայտարարէ թէ պէտք է վերցնել թաշկինակի զործածութիւնը, սրովհետեւ միջոցներով ի հակառողջական քորը մըն է:

Ահաւասիկ կնոջ մը պատասխանը այդ յօդուածին.

«Տիկիններ, պատրաստուինք զիմադրելու: Այս անգամ խնդիրը կարեւոր է: Իրաւունք մը, առանձնաշնորհում մը, շնորհէ մը տեղի բան մըն է, վայելչութիւն մըն է զոր պէտք ենք պաշտպանել: Կուգն զմեզ զբրկել կանացի արդուարդին պարագեղ առարկայէ մը զոր թաշկինակ կը կոչեն: Ուրեմն թաշկինակ թէ մը պէտք է թաշկինակ և ծաղիկի թերթի մը պէտք է: Երբ այդ լաթի կտորը այսուհետեւ ալ չի պիտի կրնանք մեր պարագան տնէ ներս պարկեցնել, կամ արդիական թերթիկի մը պէտք է գնանք: Դրանցով մը բոլորեցինք և կամ բարկութեան վայելքին մը ձեռքերնու մէջ ձմրելի զայն և կամ երբեմն մեր թեղանիքին մէջ պահել տան: Թէլ ծայր մը միայն գուրա ձգելով: Ինչ, ալ չի պիտի ունենանք խնկարոյր նրբամուշ մը գեղեցիկ աչքերու արցունքները սրբելու համար, ալ չի պիտի ունենանք սպիտակ նրբակտաւ մը յուզեալ մասերով հեռուէն մնաւ բարով մը զրկելու մենէ բաժնուողներուն, ալ չի պիտի ունենանք թերթիկի փակագրով մը անցնալործուած և անուշահոտութեամբ համակուած թաշկինակ մը զոր պաշտուած գեղեցիկ կիները բարեգութեան կրնան ձգել բերկրապատար սիրահարներու ձեռքը:

«Ո՛հ, որքան մեծ տեղ կը գրաւէր կանանց կեանքին մէջ՝ բացուած շուշանի մը չափ հազիւ մեծ այդ քառակուսի կտաւը:

Ահա աս է որ կուգն մենէ կապուել և խնջու համար, եթէ կը հաճիր:

«Աւա՛ղ, որովհետեւ միջոցաւ, զարուս բոնուորը այսպէս կուգն, ծածկանուն բոնուորը մեր հանապազօրեայ կեանքին, այն որ մեզ կը հետապնդէ մեր ամենին գաղաւթածուկ ապաւենին մէջ:

«Կ'երեւի թէ այս անսանելի իշխանը կը սիրէ մեր թաշկինակները և առողջապահական յանձնախումբերը անսուղիւ են անոր նկատմամբ:

«Ինչի նայեցէր, առողջարան պարտնէր, մեզի հանգիստ չի պիտի ձգէր: Մեր հին սովորութիւնները տակնուվրայ ըրիք: Մեր սարսններն վտարել տուիք հինաւորեց կաթախները, փետտեցիք մեր գեղեցիկ սրահակները, զորքերը վերցուցիք, զմեզ անշատեցիք մեր հին վարագոյրներէն և մանկութեան տաքուկ անկողնի ծածկոյթներէն, վերջապէս մեր բոլոր տունները ամբարիկացի վաճառականներու գրասենեակներու նմանցուցիք: Հիմա ալ մեր արգասագործները կը յարձակիք: Գիտեմ, պատիկ նրբակտաւ մը կտորէ կ'սխալեք, բայց ո՛վ կ'ըսէ թէ այդ յաղթանակով պիտի գոհանաք: Զգեստներ հակառողջական են, մուշտակներ փառաբողջ: Ըսել է թէ քառուկով և լինօլօմով պիտի հագուեցնէք զմեզ, Բայց զգեստներնու խօսքը չըլլար: Տուններին վարակուած են, հիմնայակ կործանեցէ՞ք զանոնք: Քաղաքները ապականուած են, բարուրանց ըրէք զանոնք, Ատանանք լի են փառապար միջատներով, կրակի տուէր զանոնք: Գիտեմք խտտեղ սերմեր կը հոսեցնեն, չորցուցէք զանոնք: Եւ վերջապէս քանի որ բովանդակ երկրագունդը փառաբողջ մըն է միայն, մէլտեղէն վերցուցէք զայն, մարկիսութիւնը պահպանելու համար...»

«Առ այժմ, տիկիններ, ձեռքէ չի հանենք մեր նրբամուշ թաշկինակները, տանութեով չըլլալու համար»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԹԻԱՐԿԵՆ

ՄՈՒՇԻ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱՆՆԵՐԸ. — Վերջերք, երուսաղէմի մասնակցին մէջ շատ խօսուեցաւ Ս. Արաբիոյ վանքին վրայ ուր հայ յեղափոխական խումբ մը պաշարուած էր թուրք զօրքերէն:

Բ. Դուրը, նոյն խախ, գեղապաններուն առարկութիւններուն վրայ, այս առթիւ շրջաբերական մը ուղղեց օտար երկիրներու էր ներկայացուցիչներուն: Այդ ազգաբարաւորը կ'ըսէ թէ հայ հուղիկահարներ 60ի չափ կ'են և տղայ փակած են վանքին մէջ:

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ԴԱՂԻՔ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԹԻԹԵ — ԳԼԽԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԹԻԹԵԻ ՇԵՆՔԸ

Արդ, Մուշի եպիսկոպոսին խնդրանքին վերայ, կայսերական զորքերը փորձեր են գերինները ազատելու, բայց հրացանի հարուստներու հանդիպեր են:

Դամանակ մը յետոյ, օսմանեան կառավարութիւնը, արեան հոռութիւն տեղի չի տալու նպատակաւ, խնդրած է կ. Պալատի Պատրիարքարանէն որ միջամտէ և խոստանայ Անդրանիկին և իր ընկերներուն կեանքին չեղզիւ եթէ օսմանեան հողէն զտրու ելլեն:

Որքան որ ստոյգ ըլլան թրքական աղբիւրէ առնուած այս տեղեկութիւնները, ահաւասիկ ուրիշ գրոյց մը որ բիշ մը աւելի պայծառօրէն կը բացատրէ այս շահեկան խնդիրը:

Վանքը կը բարձրանայ Մուշի հարաւային կողմը քաղաքէն քանի մը մղոն հեռու, ազմագիտական հիանալի գիրք մը ունի և բարձր տեղէ մը կը նայի Սասունի նահանգին գիւղերը տանող լեռնային անցքերուն վրայ:

Վանքին մէջ կը գտնուի որբանոց մը որ կը դաստիարակուին 60 աշակերտ — որոնք շրջաբերականին 60 գերինները ըլլալու են:

Հոկտեմբեր ամսուն մէջ, Պիթիւի վալին իմացաւ թէ հայ ժեհայիմներ Ս. Առաքելոց վանքը ապաստաներ են. առաջին ամսուսը եղաւ վանքը թնդանութիւններուն վրայ իր գաղափարէն ետ կեցաւ: Քննութիւններ կատարելու համար զրկուած զօրքերը ապաստանեալներուն հետքը չի գտան:

Սալայն օսմանեան իշխանութիւնները առիթն օգտուի ուղեցին վանքին մէջ մնալուն պահակազօրք մը հաստատելու համար: Այս կարգադրութիւնը շատ լաւ կը համաձայնէր սասունցի գիւղացիները ցիր ու ցան ընելու ծրագրին հետ, զորս կ'ուզէին կամ բռնի կամ համոզելով Մուշի վաշտաւանքին մէջ ձգել ուր չի պիտի կրնան պաշտպանուիլ Քիւրտերուն և Հնամիտի հեծելազօրքերուն դէմ: Արդիս գիտնալով է որ Անդրանիկ և իր ընկերները վանքին մէջ ամրացեր են:

Հայ ժեհայիմները որոնք թուրք պաշտօնական յիշատակարաններու մէջ յետգալի կօշուած են, նման են Սկւայ և Պուլկար հեհիմներուն, հեղեղական անկասկածաւոր քննադատներուն և արմարոյկեռուն: Անդրանիկին ընկերները կը պատկանին հոգեկաւոր Օբոքի խումբին, Օբոք փաշա մահապանուած, որ եւթը տարի շարունակ կ'ուր մղեց և դարձանալ ըլլալով սպաննուեցաւ:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (40)
ԺԸՀԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ
ԵՊԻՏՈՍԱՆ ԲԱՐՔԵՆԷ ՆԵՐՇԵՆՈՂԱՆՎԱՆՎԱՆ

ԳԼՈՒԽ Թ.

Յաջորդ օրը, մեծ լուր մը ելաւ պալատին կիներուն մէջ. «Փաշան կ'երթայ կոր»... Գնալարը որոշուած տունը կը Պուլիս երթալ հօրեղբորդիները տեսնելու. և այս յեղակարծ խորհուրդը, որ բոլորովին անակունկելի էր, իր շուրջը եղողները կ'ապշեցնէր: Եւ հանրաժողովուրդը, գերուհիները, իրենց կսկիծը իրենց տիրուհւոյն մօրմորքին շարժութիւնները հաւասարեցնելու

Տարակուսելի է որ Անդրանիկ ընդունած ըլլալ իրեն եղած առաջարկութիւնները: Աւելի հաւանական է — ինչպէս կ'իմացնէր մեզ վերջերս հասած հեռագիր մը — թէ յաջողութեամբ Թուրք զօրքերուն շրջան խորտակելու և ահաւանազնիւ լեռնային կողմը ապաստաներ են:

ԷՏԻՐՆԷԻ մէջ հրապարակաւ կ'սխեցին պուլկար մը և երկու հայ որոնք դատապարտուած էին անցնալ տարի Էստրնէի վիլայէթին մէջ գործուած քաղաքական հանգամանք ունեցող յետագալութեան մը մասնակցած ըլլալուն համար: Հայկական ջարդերէն ի վեր հրապարակաւ կատարուած առաջին մահուան պատիժներն են: Կը յիշեցնեն Միտհատ փաշան որով կատարուած կախաղանի պատիժները:

ՍՕՖԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — «Սթանտարտ»-ի Աթէնքի թղթակիցը կըսէ թէ Սօֆի իշխանուհիին վիճակը, տղարեքէն ի վեր, հեռի է գոհացուցիչ ըլլալէ: Տօքթ. Բիլլեր Պերլինքէն անմիջապէս Աթէնք կ'անշուեցաւ իշխանուհիին խնամելու համար:

ՊԱՐՄԱԿԱՆ ԾՈՒՊԱՆՈՅԻՆ ՄԷՋ. — Ստացուած վերջին լուրերուն համաձայն, կերէի թէ իրերը խաղաղօրէն կարգադրուելու վրայ են պարսկական ծովածոցին մէջ. առայժմ անգլիացիներն ու թուրքերը կ'ուր չի պիտի բռնուին: Թուրքերը Բուլէյթը ունենցողները գաղափարէն ետ կեցեր են և անգլիացիները պարսկական ծովածոցին արեւելեան եզրերը թերող երկաթուղիի գծին շինութեան գաղափարը հեռացուցեր են:

ՍԵՐ ԹՈՒՐԱ ՀՈՒՄԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ. — Սեր Թուրա չափին խօսքին նայելով, այդպիսի գիծ մը բացարձակապէս անգործածելի պիտի մնայ և թէ շինուի: Այս աշխատքն անցնելու չէ Պարսկաստանը և Արապիստանը իրարու միացնելու և ոչ ալ Պարսկաստանի ու Աֆղանիստանի:

ԲՈՒՆԻՍԻՆ ԽՈՒՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒԼ. — Ռեյստակին մէջ Պիլուլ կ'ոմսին յայտարարութիւնները որոնք կ'որոշէին Վաշտակոյ և Լէվալիի գերմանական հիւպատոսարաններու դէմ կատարուած ցոյցերուն առթիւ գերմանական կառավարութեան կատարած դիւանդիտալան շարժումները, բոլոր երեւոյթանքներուն ուղղութիւնը գրաւեցին Ռուսիոյ և Աւստրիոյ համար գործածած սենի տարբերութեամբ:

ԿՈՍՏԱՆՍՆՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՒՊԱՆՈՒԹԻՒՆ. — Կոստանուին պահանջներուն նկատմամբ գոյացած ուսեղիւրդական համեմաշխուծեան մասին. ըստ թէ Աւստրիա ցաւ յայտնի է և խոստացեր է յանցաւորները պատիել:

Համար, երկար հեծեմանքներ կ'արձակէին և անընդհատ վայնասուններով կ'օղբային:

Այնպիսի հոգածութիւններով և անհեթեթ յանձնարարութիւններով կը շրջապատէին զայն՝ որ կարծես թէ միտմնալիք Հիւսիսային Բալեռը գտնելու համար ճամբայ կ'եկէր:

Պատու Ալէշան, որ անոր դպիակը և զած էր, ուղեց ձեռքովը պահապան բրձմանք մը կարել անոր ամեն մէկ զգեստին աստաթին մէջ. երեք երկու շարունակ խուկի ծխեցին անոր անկողինին շուրջը, շար աչքը հալածելու համար:

Երբ մեկնան օրը եկաւ, մահաւորան տեսակ տեսակ հիւրերով լեցուեցաւ. եւրօպացի թէ բնիկ, ամենքն ալ պարտք համարած էին իրենց յարգանքները մատուցանել խաբիլին ազգականին և ողջերթի մաղթանքներու հետ միասին՝ իրենց խորին

Ասկի ի գառ հակառակ վիճինաի գերմանական դեսպանին խնդրանքին, աւստրիական կառավարութիւնը մերժեց վերջին գառաւարութեան զոհերուն ի նպաստ եղած հանգանակութիւնները արգելել, առարկելով թէ Գերմանիա չ'արգելէր Աւստրիոյ մէջ բոլորական կրօնատարածութեան ի նպաստ եղած հանգանակութիւնները:

Ամսոյս Գին կ'ոմս Պիլուլ երկայն տեսակցութիւն մը ունեցաւ Աւստրիոյ դեսպանին հետ: Կ'ըսուի թէ դեսպանը զոր կ'ոմ, յը մեղադրած է թէ Աւստրիա անողգակի կերպով կը նպաստէ բոլորական շարժման կայլեցող բոլորակցիներուն նկատմամբ ունեցած յարգանքին համար, զիտեղ տուեր է դիւանապետին թէ աւստրիական կառավարութիւնը կը յորդէ ամեն աղէ իրաւունքները և չի կըրնար մոռանալ իր աւանդութիւնները և մեծամասնութեան կարեւոր մասի մը հակառակի, որովհետեւ Ռուսիոյ կառավարութիւնը բոլորակցիներուն նկատմամբ Գարբիլի զօրավարին քաղաքականութեանը չի հետեւիր:

ԿԱՐՆՈՅ ԵՐԿՐԱՎԱՆԻ
ՀՐՈՒԼԻ ԳԻՈՒԹԵԱՆ

Կարնոյ առաջնորդարանէն հետեւեալ նամակը զրկուած է Պոլսոյ թերթերուն:

Երբ լաշարի ան աղէտին լուրերը, որուն ենթակայ ելաւ ամէ մը ի վեր կարէն՝ շրջակայ քանի մը գիւղերով, օրը օրին հաճած էր ձեռք պատուական թերթին մէջ հրատարակելու, այս աղէտէն յառաջ եկած ժողովրդեան թշուառութեան նկարագրութիւններուն հանդերձ:

Մամուլին նուիրական պաշտօններէն մին է հանրութեան գիտութիւնը հրաւիրել հոն, որ թշուառութեան ձեռքը երկնցած է: Ծնորդակայութեամբ կը տեսնուի որ անոնց մէ և ոչ մէկը թերացաւ իր այդ պարտականութեան մէջ և տարակոյս չկայ որ անոր շնորհիւ է որ հասարակաց կարեկցութիւնը շուտով հասաւ արեւմեալ կարեկցւոյն օգնութեան, թէ և տակաւին շատ փոքր քանակութեամբ: Որովհետեւ վերքը զոր այս աղէտը բացաւ շուտով և բեշուլ դարմանուելիք վերք մը չէ. տուներուն մեծ մասը անբնակելի է, զօրքերուն ահագին դազար մը կը տիրէ, իսկ ազգային շէնքերուն մեծ մասը վերաշինութեան կարօտ է, քաղաքին միակ եկեղեցին այսօր իր դռները գոցած է ժողովրդեան դէմ, նոյնպէս ըրած է ազգային վարժարանը. իսկ միւս վարժարանները կարեւոր նորոգութեանց կը կարօտին: Ս. Լուսաւորիչ վանքը կիսաւեր է, դաշտի

անձնութիւնները հաւասարեցնելու անոր:

Ամենուն ալ Մուրատ նուէրներ կ'ուտար, իբրեւ ճշմարիտ փաշա, շատ արեւելեան առատաձեռնութեամբ, որուն հետ յարակից է միշտ տեսակ մը սնապարծութիւն, և բաց առախի, գիտնալով թէ ինչ կարծին բոլոր այդ բարեմաղթութիւնները, չափազանց ձանձրացնողներուն ալ ըսելով. «Տէ՛ նայինք, ուզածդ կ'ուտամ, բայց երկար բարակ պատմութիւններ մի պատմեր ինձի, որովհետեւ այն ատեն կը կարծեմ թէ զիս ապուշի տեղ ես զրեք ու կը ստիպուիմ մերժելու:

Միւսն ալ, այսպէս պատասխանէր ընդունելով բրէնի կողմանէ, ալ բան մը չէր ըսեր, այսու հանգիստ վարձեալ կ'առնէր անկողնիքը, և կ'երթար օտարաբանել Մուրատի երախտապարաններուն բազմութիւնը, որուն մէջ սա խօսքերը կը լսուէին:

— Սա բրէնը նայեցէ՛ք... Ինչ մօլեգին

գիւղերէն Կանայ, Պատիշէնի և Խիլիէի և կեղեցիները անորոշած են: Այս առաջ գիւղացի կարեկցոյն աչքերուն արցունքներն է որ կը խլէ այժմ և պիտի խլէ վաղիւ, զի իր արհեստաւորի բասկը դժուարաւ պիտի տորոգէ իր հայրերուն շինած ու պայծառացուցած այս բոլոր շէնքերը:

Տուներուն աւերումը ժողովրդին նկատման անկում կը բերէ և եկեղեցիներն ու վարժարանաց փակումն ևս բարդական անկում պիտի աւելցնէ. արդ՝ ազգային մարդասերները պիտի թողուն որ այսպիսի քաղաք մը բարոյական և նիւթական աննպաստ վիճակի սը ենթարկուի. անշուշտ ո՛չ:

Այս քանի մը տողերով կարնոյ ներկայ վիճակը ներկայացնելով ձեզ, կը խնդրեմ որ ձեր բարոյական աշակցութիւնը չի խնայէք ձեր պատուական թերթի ընթերցողաց գիտութեան կողմէն ընելով՝ արկածաւաճեալներուն նպաստ հասցնելու համար:

Խորին շնորհակալութիւն յայտնելով պատուական թերթից այս աշակցութեան համար, կը մնամ ի սրտէ անոր յարատւութեան և յաջողութեան համար աղօթարար: Առաջնորդ Հայոց Կարնոյ ԶՈՒԼԷՆ Վ. ՏԷՐ ԵՂԻԱՆՆԵՆ

ՏԵՂԱԿԱՆ

Ն. Բ. Խտիւր պէտք եղած հրամանները տուաւ յոռուար ամսոյն վերջերը Ապտինի պալատին մէջ տրուելիք պարահանդէսին պատրաստութեանը համար, որուն թուականը դեռ որոշուած չէ:

— Պրահայի դիւանագիտական գործակատար Պ. Գոկորտան կիրակի օր Արիւթ մեկնեցաւ ուր ներկայ պիտի գտնուի Յը. Բերնեռը պարոցին նոր շէնքին օծման հանգիսին: Այդ Պրահայի պարոցը, հիմնուած ութը տարիէ ի վեր, շատ բարգաւաճ վիճակ մը ունի այնպէս որ անհրաժեշտ էր զայն ընդարձակել: Յիշեցնելով որ շէնքին հող մը գնել և յարմարագոյն շէնք մը կառուցանել:

Պ. Գոկորտան այս տեղափոխութեան առթիւ պիտի այցելէ վերին Եղիպտոսի մէջ գտնուող քանի մը ուրիշ Պրահայի հաստատութիւններ ալ: Իրեն պիտի ընկերանայ «Ալիանս» Պրահայի յի յանձնարարութիւն նախագահ Պ. Պարուա:

— Խալալի դիւանագիտական գործակատար Պ. Թուրքի մասոյս 29 ին կիրակի օր Գահլիէ պիտի հասնի: Տիկին և Օրիորդ Թուրքի քանի մը շաբաթ ետքը պիտի գան:

շաղկապ... ո՛րչափ ալ միջոցներ կը վատնէ կոր... կը տեսնա՞ք, օրին մէկը պատիւէն կ'իյնայ:

Երբ մեկնան ժամը հասաւ, բրէնը կարգ հեծաւ՝ հետը ունանալով թարախէն որ մինչև Ալեքսանդրիա հետը կ'երթար, և մինչև կը հեռանար, զուլս ցաւցնող ազնուարեւոյնները և պալատականները շատ մեծ խոնարհութեամբ կը ծնէին, ձեռքերուն ծախսանքին տանելով, և իրենց կեղծաւոր բարեմաղթութիւններովը զանի կը հաւաքէին: Ու վերը, կիները՝ հարէմին վանդակներուն մէջէն, անոր ետեւն կը նայէին հզօր հեղեղանքներ արձակելով, մինչև հասնելը, կարմիր մետաքսէ սատրին մէջ ընկղմած, առանց աղմուկի կուլար, և վեհալայել սուգ մը ցոյց կուտար:

Բայց, անոր ուղղուած այդ բոլոր նայ.

Գ. Է. ՍԵՆՎԱՃԵԱՆ
ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՏՈՅԵՐՈՒՆ ԳՈՆՈՐԵՆԵԱՆ

Սակայն գրեթէ ապահով է որ Պ. Թու-
ճինի բնէ ետքը եւս պիտի կանչուի Պէրի-
րատի նոր պաշտօնին զուգորդ անցնելու
համար:

—«Միտր» թերթը կըսէ թէ գերմանացի
իշխան մը Հանրի տը Ռէօն այս պահուստ
հիւրէի օթելնիւրէն միայն մէջ կը գտնուի
ծածկանունի մը տակ:

—Անհիմն է այն լուրը թէ Պ. Զիւ-
նաբլիս սիկանդիթի դործարանը ծախելու նը-
պատակաւ բանակցութիւններ կատարած ըլ-
լայ ունէ գրամատներու խումբի հետ:

—«Էմիլըն կազէթ» կը պաշտպանէ նը-
պատակաւ պաշտօններու բողոքները և
կը վերջացնէ ըսելով թէ կը յուսայ որ կի-
րակի օրերը հանգիստ ընելու պահանջու-
նին ի նկատի պիտի առնուի:

Այս պատուէ մէջ ոչ գործադուր կայ և
ոչ ալ գործաթող. յանձնախումբը կը յայ-
տարարէ թէ խաղաղարար միջոցներու մի-
այն պիտի դիմէ, վստահ ըլլալով որ ա-
ռանկով պիտի վստահի տերերուն հանու-
թիւնը որոնք պատրաստ են իրենց պաշ-
տօններուն գոհացում ապրու:

—Երեկ վարձիւներու բարձրագոյն յանձ-
նախումբը, ընդհանուր ելմանցովը:
Այս տարուան գոյացած հասոյթները անց-
եալ տարուան հասոյթներէն մեծ եղած են:

Բարձրագոյն յանձնախումբը այս շաբ-
թուան մէջ պիտի գումարուի խորհիւն նա-
խագահութեամբ վերջնականապէս ընդունե-
լու համար ելմանցովը:

—Տախրա Սանիէի շաբաթի գործարան-
ներուն վրայ այս տարուան ըրած կորուստ-
ները 150,000 ոսկի կը հաշուուին:

Յառաջիկայ նիստի մը մէջ ընդհանրա-
պիտի ուսումնասիրեն այս բացէն առաջ ե-
կած կացութիւնը և պիտի փնտռեն ձեռք
առնուելիք անհրաժեշտ միջոցները:

—Սըր Զոն Էրա և սըր Պէնժամեն Պէյ-
քըր այցելեցին Հալիֆան անդին գտնուող
երկիրները ուր կառավարութիւնը միտք ու-
նի նոր ջրամարմիններ շինելու:

Կը հաւատեն թէ այս նոր ջրամ-
բարներու աշխատութիւնները անմիջապէս
պիտի սկսին, և կամ Ասուանի ջրամ-
բարներուն աւարտումէն ետքը:

Ծախքերը երկու միլիոն ոսկի կը հաշուուին:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՅՐԹԱՌՈՒՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Կրաֆ
Ռէյնէթի մէջ սկսաւ Շիբէրսի դա-
տավարութիւնը. իրեն գէտ երեսուն

ուածքներուն մէջ, բոլոր այդ սրտերուն մէջ
զոր անոր մեկնուելը կը մորմոքէր, չկար ա-
ւելի տխուր, չկար աւելի խորին կերպով
եղուկ նայածը մը և սիրտ մը քան զա-
տիարակուհիները. կռահած էր թէ իր խըս-
տաբարոյթիւնէն էր որ զանի կը հեռաց-
նէր կը վտարէր, կը հասկնար որ ան իր-
մէ փախչելու համար կ'եղար կ'երթար, և
տարօրինակ լաւ, ո՛ր յաւիտեական սըր-
բազանութիւն մեր հոգեւոյն, կը զարմա-
նար որ ինչ որ ինքը որոշած էր ընել ան-
կէ խոյս տալու համար, ան ալ նոյնը հա-
մարձակած էր ընել զինքը պատժելու կամ
մահալու համար:

Ինչ տկարութիւն է ուրիշ մեր տկարու-
թիւնը... Ինչ ողորմելի միտով խորութեան
ենք ուրիշ որ մեր հաստատագոյն որո-
շումները այնչափ բնէ տեղ կը գրաւեն մեր

ամբաստանութիւն կայ սպաննութեան
կամուտը հրդեհի, երկաթուղիի ոճ-
բագործական արտադրանքներու և
գերիներուն գէտ անողորմութեան:

ԼՈՒՏՈՒՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Պ. Ալբիթ,
Վոլվերհամթումի մէջ արտասանած
ճառով մը ամբողջովին կ'ընդունի
Լորտ Ռոդպէրի յայտնած գաղա-
փարը և Լորտ Ֆիչնէրի ու Լորտ Մի-
նէրի գովեստը կ'ընէ:

Պ. Գամպլէ—Պանէթման Լորտ Հա-
միլթոնի նամակին պատասխանելով
կ'ըսէ թէ բրիտանական զօրախում-
բերուն մասին ստալոյզ պատմութիւն-
ներու մէջ մատ ունեցած է:

ԼՈՒՏՈՒՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Հաւանա-
կան է թէ պահեստի գործերէն 1000
հոգիները վաշտի մը հրաման պիտի
տրուի Գաբ մեկնելու համար կազմ
և պատրաստ գտնուելու:

ՄՈՄՊԱՆԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Ուիլ-
սոնի երկաթուղիի գիծը մինչև Վի-
թորիա—Նիւնգա երկարած է:

ՄԷԼԻՆԳՐԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Աւս-
տրալիական գաշնակցութեան նա-
խարարապետը ունկնդրութեան մը
մէջ ըսեց թէ չի կրնար Մեծն Բը-
րիտանիոյ զօրք նուիրել եթէ բացա-
յայտօրէն չի հասկցնեն իրեն թէ
երօք պէտք ունին զօրքի:

ԼՈՒՏՈՒՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Կառավա-
րութիւնը, մանրամասն ընկնութեան
ետքը, հաւնեցաւ լեռնային նոր թըն-
դանութի մը 10 ոսկի արժողութեամբ
ռումբներով և հրամայեց որ 48 հատ
այդ թնդանութեան շինուի Հինգլաս-
տանի բանակին համար:

ԼԻՈՒՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Ուեզլին ընդ-
հարում մը տեղի ունեցաւ ժնէլ գա-
ցող կառավարութի մը և բազալային
թրանվայի մը միջև: 4 հոգի մեռան
և 20 հոգի մահուան վտանգի մէջ
կը գտնուին:

ԼՈՒՏՈՒՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Կերեի թէ
կառավարութիւնը նորէն վերսկսած
է կռուիլ Երեսայթըթ Ալբի Լիկի
գէտ իրաւասացի պետերը պարծեն-
կոտութեամբ կ'ըսեն թէ գաշնակցու-
թիւնը բիրաւոր ճիւղաւորումներ ու-
նի և բացէ ի բաց կ'արհամարէ վիտ-
համը:

ՊԻԻՏՆԱԲԷՍԹ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Սի-
գործ բանտները ծանր խռովութիւն
մը հանեցին: Ոստիկանութիւնը ցիր

մաքին մէջ, որ կատարուած զոհարեա-
լութիւնը այնչափ վիշալ կը պատճառէ մեզի,
և որ՝ երբ որոշած ենք բարիին համար
մենք մեզի դէմ գործել, կը սրբողինք ա-
նոնց որ մեզ կը սիրեն՝ թէ ինչու համար
մեր միտքը հասկցան և մեզ կանխեցին:

Ահա այս հարցումը ինքն իրեն կ'ընէր
ժերմէն և ալ վրան ոյժ չէր զգար անոր
պատասխանելու. իր քաջութիւնը ելած գա-
ցած էր իրմէ այդ բրէնսին հետ որ բո-
վանգի իր հոգին առեր տարեր էր. չէր
ուրած անգամ զինքը դարձեալ անգամ մը
տեսնել. ըէն պահուց տղու մը պէս, որուն
քմահաճոյքը մտիկ ընել չուզեցին, նաւ կը
մտնէր կ'երթար առանց մաս բարով մը
ըսելու, առանց իրեն ուղղելու բարեկամու-
թեան կամ բարկութեան խօսք մը:

Եւ սակայն, այսպէս աւելի աղէկ չէր...

ու ցան ըրաւ բողոքութիւնը սուրի
հարուածներով և անոնցմէ շատերը
վիրաւորեց: Ասոր վրայ խումբերը
քաղաքին մեծ փողոցները խռովեցին
խանութներուն ապակիները խորտա-
կելով և զոհարեցնել և արժէքաւոր
տուրիստներու վնասատուները կո-
ղարկեցին:

ԲԱՐԻՉ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Փոխտու-
թեան գումարը քսան անգամ պիտի
զոյցուի:

Միայն Բարիզի փոխտուութեան
հաստատութիւնները կը գոյացնեն
813,000,000 ֆրանք:

ԳՈՐԶՈՒ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Մահմու-
տա Տամատ վերջնականապէս հը-
րաման ստացաւ Գունատանէն մեկ-
նելու: Կիպրոս կամ Նիս պիտի երթայ:

ՊՐԻԻՏՏՈՒ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Շաբաթ-
ներու զեպանաժողովին գումարութիւնը
յետաձգուեցաւ Գունվար 6ին:

ԲԱՐԻՉ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Թայմի մէջ
հրատարակուած անպաշտօն ազգա-
բարագիր մը կ'ըսէ թէ առ այժմ սի-
ամական խնդիր մը գոյութիւն չունի,
բայց անտեղի է կարծել թէ Ֆրան-
սան տրամադիր է իր ունեցած երաշ-
խատութիւններէն մէկ հատն իսկ
զոհելու երկրորդական խնդիրներու
կարգադրութեան համար:

ՆՈՐ ՕՐԼԻՄՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Այսօր
հոսկէ նաւ բեռացան Գաբ զրկուելու
համար 143,050 ձի և շորի որոնք 3
միլիոն անգլիական ոսկի կը հաշ-
վուին:

ԲԷՅՐԷՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Թոնկ Շափի
պաշտօնատարները հրապարակաւ նե-
րում խնդրեցին անցեալ տարուան
քրիստոնէից չարքերուն համար 70
գաղաղի մէջ գտնուող միւս զոհերը
յուզարկաւորական պատիւները ու-
նեցաւ:

ԼՈՒՏՈՒՆ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Խորհրդա-
րանի անդամներէն Պ. Հայտըն 3 աւ-
սրուան բանտարկութեան դատապար-
տուեցաւ իր ատենախօսութիւններով
ժողովուրդը պոյսօթրածի զրգուած ըլ-
լալուն համար:

Կ. ՊՈԼԻՍ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Օսման-
եան դրօշակը պարզուած էր Մա-
պարուրի բնակարանին վրայ ի Գո-
վէյթ. բայց բրիտանական հրետա-
նակին հրամանատարը վար իջեցնել
տուաւ զայն և անոր տեղը դնել տու-
աւ Մապարուրի դրօշակը ի նշան ի-
րեն անկախութեան:

միթէ ինքը իրաւունք ունէր անոր հեռա-
նալուն ցաւելու:

Այն դժուարին կացութեան մէջ որուն
տուայտանքներուն մասնուած էր իր երի-
տասարկութիւնը, Մուրատի հեռանալը փը-
րկութեան իր միակ յոյսը, բացարձակ հա-
զարաւթեան մը անխաբ խոտումն էր:

Անշուշտ այս ամէնը կ'ըսէր ու դարձեալ
կ'ըսէր իրեն իր բանավարութիւնը. բայց
այդ գերագոյն բանավարութիւնը որուն հա-
մար կը պարծենար, չէր կրնար արգիլել
որ մատուց աղջկան իր սիրտը տառապէր
ու խորտակուէր:

Ուրիշ բան մըն ալ կար որ մատան-
ջութիւն կը պատճառէր ժերմէնին: Սթա-
Ապուհայի ամուսնութիւնը: Միթէ բրէնը,
այն վիշտին մէջ զոր ինքը անոր պատճա-
ռած էր իրենց վերջին խօսակցութեան մի-

ԲԱՐԻՉ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Պատէնի
արձանին օժման հանգէսը կատար-
ուեցաւ Պ. Լուպէի, նախարարներուն,
երեսփոխանական ժողովին և ձե-
րակոյտին նախագահներուն և խոր-
հրդարանին բազմաթիւ անդամնե-
րուն ներկայութեանը: Պ. Տոսսէ, լծա-
զապետական խորհրդին ազգայնական
նախագահը ուղեց խօսիլ թէպէտեւ
չէր արձանագործած ատենախօսու-
նու ցանկին մէջ. բազմութեան յա-
րուցած ազմուկը արգիլեց զինքը
խօսելու:

ԹՈՒՆՈՒՉ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Պ. Բի-
շոն, նոր կառավարիչը, տեղա հա-
սաւ և շերտերէն ընդունուեցաւ:

ՀՈՒՄ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ.— Երեսփոխա-
նական ժողովը ընդունեցաւ կառա-
վարութեան կողմէ առաջարկուած
երմտական միջոցները. ալիւրին վրայ
շրուած մաքսագիրը աստիճանաբար
ալիւրի ջնուի:

Ա. Զ. Դ. ԾԱՆՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ

ՊԱՊ-ԷԼ-ԼՈՒՐԵՐ պողոտային վրայ,
ՀԱՆԱՅԻՅԷԻՆ գիւմարը, իր մասնաւոր
յաճախորդները ունեցող և բանուկ
նորաձեւութեան առարկաներու (ԹՈ-
ՀԱՅԻՅԷԻ) խանութ մը, տիրոջ մահ-
ուան պատճառաւ, այս անգամ ծա-
խու հանուած է մէջը գտնուած առ-
բողջ ապրանքներով և յօրինուածով:
Դիւրամատչելի պայմաններ:
Դնել փափաքողները պէտք է դի-
մեն առ Տիւր Ռօտօլֆ Մէրճանճեան
Ապալին Ամալէթիին փողոց թիւ 26:

ՏԻՊԻՆ Է. Ա. ԱՐՄԱՆՅԱՆ ԴԵՐՁԱԿՈՒՅԻ

Քաղաքիս մէջ ծանօթ այս գերձակուհին
պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ
յաճախորդներուն ինչպէս նաեւ յարգոյ հա-
տարկութեան թէ այս անգամ իր Պապ-
է-Լուրէ արքային փոխադրած է Պապ-է-
-Հափտ փողոց Տէպպանի նորաշէն տան
մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթմանը:
10—10

Ջոզին, ժամանակ, նոյն իսկ փափաք ու-
նեցած էր իր պաշտպանելին վրայ հօ-
սելու. կամայ թէ ակամայ մոռցած չէր ա-
նոր համար խօսիլ իր մօրը հետ... Դատ
կասկածելի էր այս, և... Ետք... Ետքը,
կատարեալ աղէտը մըն էր այս փորթիկ
ֆէլաճ աղջկանը համար, անդարմանելի
յուսահատութիւնը երկիւղելի ամուսնու-
թեան մը որ իրեն կամքին հակառակ պի-
տի կատարուէր:

Սթա Ապուհա, իրեն թէ իր ընկերուհի-
ին միտքը կարգար, կենսաեղով գործ մը
բանած միջոցին՝ մէկն էր մէկ աղէտ և
լաւ և իր թխագեղ պղտը գալով ժերմէնին
ուսին կրթնեցնելով՝ թոյնուի ձայնով անոր
ըսաւ:

Շարունակելի) Թարգմ. Ե. ՍԵՐԵՍԵՆ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՆ

ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻՍԻՆ 563 ՄԻԼԻՍԻՆ 961 ՀԱՋԱՐ ՖՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծաղրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ ռազմազինը և ապահովագրութեան զանազան դրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններու ճեղքելովեանց համար զիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼՅԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք. Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալաւոր Գ. ԵԿԱՆՈՅ ԴԵՐ-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱՆԴԼՈՒԻ 200,000,000 ՖՐԱՆԻ
ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ ՅԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԵՔՐՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եղիպտոսի և արաւ-ասհմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ. ձեւով գումարներն փոխարէն կանխորոշ պայմանաւորով մուտհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԽԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՈՅ ԴԻՄ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) ղէպի Բերէա, Իզմիր, Միտիլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբթի օր, առատօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենախները Բի-

րէա հանդիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԴԻՄ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) ղէպի Բօս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէլլուս, Տրիպոլիս, Մարսիս և Իսկէստերուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առատօտեան ժամը 6ին:

Ճամբորդները անգամ մը երթեալ կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանք համար զիմել ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բօս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև փութի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

ՅԱՆՋՆԱԿԱՆԱՐ-ԴՈՐԾԱԿԱՆԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՑԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջակայներէն կ'ընդունուին Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ զտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համալսարանի, Պրոնշուիկի վիճակահանութեանց տոմարներու, Եղիպտոսական Գրէտի ֆօնսիէի, Բումէլիի երկաթուղւոյ բրոմէսներու, և զարձեւալ ամալվճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապագրանքները ըլլալու են կանխիկ փոսթի միջոցաւ. Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը ղրկել և մնացեալը «գօնթու ուսմ» պուրքման» վճարել այն պահուն, երբ յանձնարարուածները ղրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 ղրշ. արժէքով յանձնարարութիւններու համար Եղիպտ. Յ. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մարտի կային ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzenatzian
Rue Abdul-Aziz
CAIRE

Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց համար:

Ձափի վրայ գգեսներ, յաւազոյն պայտաններով:

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
Ի ՄԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍԵԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենախերով

ԱՆՈՐԴԵՐՈՐ ՆԻՔՈԼԱ, արղթ. թծն. 5500	ՉԻՒԱՋՅԻ տարողութիւն թծն. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ, " " 5500	ՉԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԴՍՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օտէսա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԶԻՐԻՄ ՏԱՐՅԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենախներուն հետ որ ուղղակի կ'երթան ՄԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ՏՈՒՂՈՒ ԱՍԻՍԿԱՆ ԵՋԵՐԲՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԻՐԻՄ և ԱՋՈՅԻ ԾՈՎ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԴՍՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅՈՒ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ՔԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Իզմիր, Սիւէզ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատուեալ խտրական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1, 500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.
Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եղիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ:

ԴՅՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլի հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փախում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է ա շն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալքոլային քեղերու նման չի խանդարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

33—316

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՅ ԵՒ ՎԱՃԱՌԱՑԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԿԻՆ ՋԱՊԹԻՅԷԻ ՇԷՆԲԻՆ ԴԷՄ